

**ԳԼՈՒԽ IV. ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍՈՒՄ ԶԵՎԱՎՈՐՎՈՂ  
ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ**

Հարավային Կովկասում ընթացող Էներգետիկ աշխարհաքաղաքական պայքարի ուսումնասիրությունը կարեւոր պայման է՝ հասկանալու տարածաշրջանի անվտանգային միջավայրը եւ դրա զարգացման դինամիկան՝ պայմանավորված Էներգետիկ գործոնի ազդեցության փոփոխմամբ։ Տարածաշրջանում ձեւավորվող Էներգետիկ անվտանգության համակարգերը փոխկապակցված են ոչ միայն Հարավային Կովկասի եւ Կասպից ծովի ավագանի երկրներում գործող ու միմյանց կապված Էներգետիկ համակարգերով, այլև տարածաշրջանով հետաքրքրված տերությունների աշխարհաքաղաքական շահերով։ Տարածաշրջանի պետությունների մրցակցությունը, պայմանավորված հակամարտությունների գոյությամբ եւ միջային միջեւ առկա տարածայնություններով, սրում է իրավիճակը Հարավային Կովկասում։

Հիմնականում հենց տարածաշրջանով հետաքրքրված դերակատարների՝ ԱՄՆ, Եվրամիություն, Ռուսաստան եւ Չինաստան, Էներգետիկ աշխարհաքաղաքական մրցակցությունն է շատ դեպքերում վերածվում սուր հակամարտության եւ ազդում տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա՝ տեղի պետություններին ստիպելով իրենց Էներգետիկ քաղաքականությունը հասահունչ դարձնել առաջնների շահերին։ Այդ դերակատարների մրցակցությունը Կովկաս-կասպյան տարածաշրջանում բացասաբար է ազդում ոչ միայն անվտանգության միջավայրի վրա ընդհանրապես, այլև Էներգետիկ անվտանգության համակարգերի վրա մասնավորապես։

Արեւմուտքի Էներգետիկ անվտանգության հիմնական սկզբունքը՝ Էներգետիկ բոլոր աղբյուրների մատչելիության կիրառումը գործում է, երբ նավթի քիչ թե շատ պաշար ունեցող ամեն մի երկրից նավթի ու գազի արդյունահանումը եւ արտահանումը դաշնում են վերահսկելի, թափանցիկ ու մատչելի վերազգային նավթային գերհսկա ընկերությունների համար։ Յենց այս դիտանկյունից է Կրեւմուտքը վերաբերվում Կովկաս-կասպյան տարածաշրջանին՝ որպես մատչելի նավթի ու գազի հերթական տարածքի, որի գոյությունը ամրապնդում է միջազգային շուկայում արեւմտյան սպառողների դիրքերը՝ թույլ չտալով օրեւէ մեկին դոմինանտ դեր ստանձնել այնտեղ։

Այսինքն՝ համաշխարհային Էներգետիկ շուկայի ազատականացման գործընթացում կամ, այլ կերպ ասած, բոլոր աղբյուրների մատչելիության համակարգի՝ իսմիք ստեղծման գործում Կովկաս-կասպյան տարածաշրջանը ընդամենը մեկ օրակ է, որը թեեւ վճռորոշ դեր չի կատարում այդ համակարգի գործունեության մեջ, սակայն անհրաժեշտ պայման է Էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգի լիարժեքության համար։

Տարածաշրջանի նշանակությունը գլոբալ Էներգետիկ անվտանգության համակարգում մեծ չէ, սակայն նաեւ թերագնահատելու կարիք չկա, քանի որ Արեւմուտքը շարունակում է կարեւորել նավթի ու գազի արտահանման յուրաքանչյուր լրացուցիչ հնարավորությունը։ Յենց այս տեսանկյունից էլ պետք է դիտարկել Հարավային Կովկասի Էներգետիկ նշանակությունը՝ որպես Արեւմուտքի կողմից ձեւավորվող գլոբալ Էներգետիկ անվտանգության մի մաս, որտեղից նավթի ու գազի արդյունահանումը եւ արտահանումը ամրապնդում են անվտանգային այդ համակարգի կայունությունը եւ հուսալիությունը։ Յետեւաբար՝ Էներգետիկ անվտանգության արեւմտյան մոդելի գործունեության շրջանակում էլ պետք է դիտարկել նաեւ Հայաստանի Հանրապետության ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դերակատարությունը՝ որպես տարածաշրջանում ծավալվող Էներգետիկ աշխարհաքաղաքական մրցակցության եւ Էներգետիկ միջանցքի անվտանգության պահպանման կարեւոր ու ազդեցիկ մասնակիցների։

Հայաստանի Հանրապետությունը ուրույն դեր ունի տարածաշրջանային անվտանգային միջավայրի կայունության պահպանման, հետեւաբար՝ Եներգետիկ անվտանգության համակարգերի գործունեության մեջ: Այս տեսակետը ժամանակի ընթացքում ավելի հասկանալի եւ ընկալելի է դառնում այն տերությունների համար, որոնք շահագրգուված են Հարավային Կովկասի Եներգետիկ միջանցքի կայուն գործունեությամբ: Վճռորոշ է դառնում կարծիքը, որ տարածաշրջանի կայունությունը եւ Եներգետիկ միջանցքի գործունեությունը կախված են Հայաստանի Հանրապետության դիրքորոշումից եւ Ներգրավվածությունից տարածաշրջանի անվտանգային միջավայրի բարելավման գործընթացի մեջ: Սա է նաև պատճառներից մեկը, որ Լեռնային Ղարաբաղի խնդրում ստատուս քվոյի, այսինքն՝ անվտանգության ներկա իրավիճակի պահպանումը Եներգետիկ անվտանգության գլոբալ հակարագի կայունությամբ շահգրգիռ դերակատարների համար դառնում է կարեւոր պայման՝ տարածաշրջանից Եներգետիկ անխափան հոսքերն ապահովելու գործում:

Հարավային Կովկասի հակամարտությունների, հատկապես Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի սրումը կարող է պատճառ դառնալ անկայունության եւ Եներգետիկ հոսքերի երկարատեւ ընդհատման: 2008թ. Հարավային Օսիայի պատճառով սկսված ռուս-վրացական հայտնի ճգնաժամը մեկ անգամ եւս ապացուցեց, որ հակամարտությունների սրումը ուղղակիրորեն ազդում է Եներգակիրների արտահաման վրա՝ ընդհատելով խողովակաշարերի աշխատանքը, խոցելի դարձնելով տարանցման ուղին:

Ժամանակի ընթացքում Արեւմուտքի համար ընկալելի է դառնում, որ առանց Հայաստանի ներգրավման տարածաշրջանային անվտանգության մասին ընդհանրապես եւ Եներգետիկ հոսքերի կայունության մասին մասնավորապես խոսելու անխմաստ է: ՀՀ-ն պետք է ամրացնի իր դիրքորո՞՝ Արեւմուտքին ցուցադրելով, որ տարածաշրջանում կայունության պահպանման գլխավոր գործոնն է, աղբեջանական ագրեսիան զսպող հիմնական ուժը, հետեւաբար՝ Հարավային Կովկասից Եներգակիրների տարանցման անվտանգության հիմնական երաշխավորներից մեկը, առանց որի շահերը հաշվի առնելու չի կարելի խոսել Հարավային Կովկասի կայունության, առավել եւս՝ Եներգակիրների հուսալի տարանցման մասին:

## 1. Հայաստան-Ռուսաստան հարաբերությունները Եներգետիկ անվտանգության ոլորտում

Եներգետիկ անվտանգության հիմնախնդիրն ուղղակիրորեն առնչվում է ամեն մի պետության ազգային անվտանգությանը, որը չի կարող արդյունավետ գործել առանց Եներգետիկ անվտանգության ժամանակակից համակարգերի: Այս իրողության մեջ համոզվեցինք դեռ անցյալ դարի 90-ականներին՝ այսպես կոչված «մութ ու ցուրտ» տարիններին, երբ երկրում ստեղծված Եներգետիկ ճգնաժամի պատճառը ոչ այնքան դարաբաղյան պատերազմն էր, որքան Եներգետիկ անվտանգության ռազմավարության մշակման հարցում գիտելիքների պակասը:

ԽՄՀՄ-ի փլուզումից հետո Եներգետիկ ճգնաժամը նորանկախ Հայաստանում հնարավոր, բայց ոչ պարտադիր պայման էր: Եթե լիներ պետության ազգային անվտանգության եւ մասնավորապես Եներգետիկ անվտանգության մասին գիտելիքահեն մոտեցում, ապա Հայաստանի Հանրապետությունը կկարողանար խուսափել Եներգետիկ երկարատեւ ճգնաժամից:

Հայաստանի Հանրապետության Եներգետիկ անվտանգության համակարգը թե՛ ԽՄՀՄ-ի գոյության տարիններին, թե՛ այսօր հիմնականում կապված է Ռուսաստանի Դաշնության հետ հարաբերություններից, քանի որ նա է մինչ օրս Եներգակիրների հիմնական մատակարարը: Ներմուծվող գազի 80% եւ միջուկային վառելիքի 100% մատակարարումները մինչ օրս կատարվում են Ռուսաստանից:

Հայաստան-Ռուսաստան քաղաքական եւ տնտեսական հարաբերությունների նորագույն շրջանը սկսվեց ԽՄՀՄ-ի փլուզումից հետո՝ տասնամյակներ շարունակ ստեղծված տնտեսական կապերի զանգվածային խցումներով: Պատճառներից մեկը Հարավային Կովկասում ստեղծված իրավիճակն էր՝ պատերազմը Լեռնային Ղարաբաղում, Արխագիայում եւ Հարավային Օսիայում:

Փոփոխված քաղաքական իրավիճակը եւ խզված կապերը Ռուսաստան-Հայաստան տնտեսական հարաբերություններում խոր ճգնաժամի հանգեցրին: ԽՄՀՄ-ի փլուզումը բացասաբար աղբեց բոլոր

հանրապետությունների վրա, սակայն Հայաստանի Հանրապետության վրա այդ ազդեցությունն ավելի մեծ էր, քանի որ մեր երկիրը հայտնվեց տնտեսական եւ էներգետիկ շրջափակման մեջ:

Հայաստան արդյունաբերական հումքի եւ գազի ներկրման ընդհատումը հանգեցրեց տնտեսական եւ հատկապես էներգետիկ համակարգի փլուզմանը: Ներքին համախառն արդյունքը կրճատվեց 10 անգամ, ինչն անևախաղեա էր ԱՊՀ ողջ տարածքում:

1991թ. հետո Հայաստանը եւ Ռուսաստանը սկսեցին կառուցել նոր հարաբերություններ, ինչի համար վերջին 2 տասնամյակում Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ, ընդհանուր առմամբ, կնքվել են մոտ 170 միջայտական, միջկառավարական եւ միջգերատեսչական պայմանագրեր:

Միջպետական առաջին պայմանագրերից մեկը, որը կարգավորում էր Երկուստեք հարաբերությունները, ստորագրվեց ներ 1992թ. փետրվարի 28-ին եւ կոչվում էր «ՀՀ կառավարության եւ ՌԴ կառավարության միջեւ ազատ առեւտրի վերաբերյալ»<sup>1</sup> համաձայնագրի:

Երկու պետությունների տնտեսական հարաբերություններն ավելի ակտիվացան, երբ 2000թ. հոկտեմբերի 20-ին կնքվեց Երկուստեք կարգավորման բազային Երկրորդ պայմանագրի Հայաստանի եւ Ռուսաստանի կառավարությունների միջեւ՝ համատեղ առեւտրի ժամանակ ոչ ուղղակի հարկերի հավաքման մասին<sup>2</sup>: Տնտեսական հարաբերությունների կարգավորման համար ռազմավարական նշանակություն ունի նաեւ 2001թ. սեպտեմբերի 15-ին «ՀՀ-ի եւ ՌԴ-ի միջեւ մինչեւ 2010թ. տնտեսական Երկարատեղ համագործակցության մասին պայմանագրի»<sup>3</sup> կնքումը:

Կարող ենք ասել, որ 90-ականների տնտեսական համագործակցության ցածր մակարդակին փոխարինելու եկավ 2000-ականների ակտիվ Երկուողմ համագործակցությունը:

Հայաստանի Հանրապետության շրջափակումից հատկապես տուժեց տնտեսության էներգետիկ հատվածը: 1989թ. Մեծամորի ատոմակայակի չմտածված փակման եւ գազի ներմուծման անկանոնության պայմաններում Հայաստանը էներգետիկ խոր ճգնաժամի մեջ հայտնվեց: Գազի մատակարարման ընդհատումների հետեւանքով Երեւանի եւ Յաղովանի ջերմակայանները չեին աշխատում, ինչը հանգեցրել էր Էլեկտրաէներգիայի պակասության:

Ստեղծված իրավիճակի հաղթահարման համար իրականացվեց հայկական աելի վերագործարկման բավականին բարդ ծրագիրը, ինչն անևախաղեա էր ատոմային կայանների շահագործման պատմության ընթացքում: 90-ականների Երկրորդ կեսից կանոնավորվեց նաեւ գազի մատակարարումը Ռուսաստանի Դաշնությունից:

Մեծամորի աելի վառելիքը մատակարարվում էր Ռուսաստանից, եւ հիմնականում ատոմային վառելիքի մատակարարման պարտը էր (մոտ 100 մլն դրամ) պատճառը, որ Հայաստանի եւ Ռուսաստանի դեկավարության հաջողացը: Գույք՝ պարտը դիմաց» ծրագիրը, ինչը իր ձեւի մեջ նույնպես անևախաղեա էր համաշխարհային պրակտիկայում:

Այս համաձայնագրի շրջանակներում որոշվեց 5 տարով Մեծամորի աելի ֆինանսական կառավարումը հանձնել Ռուսաստանին: Սակայն հայ-ռուսական էներգետիկ ոլորտում ամենամեծ եւ հաջողված գործառքը կարելի է համարել 1997թ. «Հայռուսգազարդ» հայ-ռուսական համատեղ ընկերության ստեղծումը<sup>4</sup>: Այս համատեղ ծերսարկության են պատկանում Հայաստանում գազի շուկայի ճնշող մեծամասնությունը եւ Երկրի գազաբաշխման ողջ համակարգը (2013թ. Հայաստանի կառավարությունը

<sup>1</sup> Տես «Համաձայնագրի Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ ազատ առեւտրի վերաբերյալ», 28 փետրվարի 1992 թ. (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

<sup>2</sup> Տես «Համաձայնագրի Հայաստանի Հանրապետության կառավարության եւ Ռուսաստանի Դաշնության կառավարության միջեւ փոխադարձ առեւտրում անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին», 20 հոկտեմբերի 2000թ., թ. Սոսկվա (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

<sup>3</sup> Տես «Պայմանագրի Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության միջեւ մինչեւ 2010թ. Երկարաժամկետ տնտեսական համագործակցության մասին», 15 սեպտեմբերի 2001թ., թ. Երեւան (<http://www.mfa.am/hy/country-by-country/ru/>):

<sup>4</sup> Տես «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ի կայքը (<http://www.armrusgasprom.am/am/home/arg/>):

որոշում ընդունեց «Գազպրոմին» վաճառել «Յայռուսգազարդի» բաժնետոմսերի՝ պետությանը պատկանող վերջին 20%-ը) եւ Յուրագույն ջէկ-ի 5-րդ Եներգաբլոկը<sup>5</sup>:

Ուստաստանի Դաշնությունը տիրապետում է համաշխարհային գազի պաշարների 17,6%-ին, ինչը երկրորդն է աշխարհում, առաջին տեղում է մեր հարավային հարեւանը՝ Իրանի Իսլամական Հանրապետությունը՝ մոտ 18%, ԱՊՀ տարածքում գազի զգալի պաշարներ ունի նաեւ Թուրքմենստանը՝ 9,3%, Ուզբեկստանը եւ Ղազախստանը տիրապետում են ապացուցված գազի պաշարների համապատասխանաբար 0,6 եւ 0,7%-ին, իսկ Վերբեջանը՝ 0,5%-ին<sup>6</sup>:

Քետագայում Յայաստանի Հանրապետությունը, Եներգակիրների Ներմուծման բազմազանեցման քաղաքականության տրամաբանությունից Ելնելով, ակտիվ բանակցություններ սկսեց վարել Իրանի Իսլամական Հանրապետության հետ: Կողմերը 2004թ. սեպտեմբերի 8-ին ստորագրեցին Իրան-Յայաստան գազամուղի կառուցման պայմանագիր՝ Յամաձայն կնքված պայմանագրի՝ իրանական կողմը պետք է Յայաստանի Հանրապետությանը 20 տարվա ընթացքում մատակարարի մոտ 36 մլրդ խորանարդ մետր գազ:

Յայաստանի Եներգետիկ անվտանգության համար ռազմավարական նշանակության այս խողովակաշարի կառուցման նկատմամբ ռուսական կողմը սկզբնական շրջանում զգուշավոր վերաբերմունք ուներ, ինչում էին կարծիքներ, թե հայ-իրանական խողովակաշարը կարող է նույնիսկ մրցակից լինել ռուս-թուրքական «Երևանագույն հոսք» կոչվող գազամուղին: Քետագայում «Գազպրոմ» հայտարարեց, որ հետաքրքրված է ծրագրով եւ պատրաստ է մասնակցել խողովակաշարի կառուցմանը: Այս փաստը 2005թ. հաստատեց նաեւ Յայաստանի Հանրապետություն ժամանած Ռուսաստանի Դաշնության արտգործնախարար Սերգեյ Լավրովը<sup>7</sup>:

Յայաստան-Իրան գազամուղը ոչ միայն այլընտրանքային գազ է ապահովում Յայաստանի Հանրապետությանը եւ ինարավոր ճգնաժամի՝ Ռուսաստանից գազի մատակարարման խափանման դեպքում կարող է այլընտրանք լինել, այլեւ որոշ չափով զայում է գազի գնի բարձրացումը «Գազպրոմի» կողմից՝ ռուսական գազը միշտ «ստիպված» է ավելի եժան լինել, քան իրանականը:

Մինչեւ 2013թ. գարունը, ըստ պաշտոնական աղյուրների, ԱՊՀ տարածաշրջանում «Գազպրոմը» Յայաստանին գազը վաճառում էր 180\$ 1000 խորանարդ մետրի համար, Բելառուսի համար այդ գինը 2013թ. կազմել է 186\$, իսկ Ուկրաինայի համար ռուսական գազի միշտն տարեկան գինը 2013թ. եղել է 426\$, Եվրոպական Երկրներին վաճառվող ռուսական գազի գինը տատանվում էր 350\$-550\$-ի սահմաններում<sup>8</sup>:

«Գազ՝ Էլեկտրականության դիմաց» ծրագրով Իրանից առաքվող գազի մոտավոր գինը 2006-2010թթ. 1000 խորանարդ մետրի համար 215\$-230\$ էր: Ինչպես նշեցինք, Յայաստանի Հանրապետությունը Ռուսաստանից գազը մինչեւ 2013թ. ստանում էր 180\$-ով, իսկ 2013թ. գարնանից գինը բարձրացավ՝ հասնելով 270\$-ի 1000 խորանարդ մետրի համար: Ռուսաստանի Դաշնության կողմից գազի գնի նման աննախադեպ բարձրացումը Յայաստանի Հանրապետության համար միշագային շուկայում վերջին տարիներին գազի գնի թանկացման հետեւանք էր: Սակայն նաեւ պարզ դարձավ, որ գազի գնի իրական բարձրացում եղել էր ուր 2011թ. եւ կուտակված պարտքերի (մոտ 300 մլն դրամ) դի-

<sup>5</sup> Տես "Յայռուսգազարդ"-ի դեկավարը դժողով չէ 5-րդ Եներգաբլոկի գործարքից, 22 մայիսի 2006, <http://armenia.am.gazprom.com/press/about-company/2006/05/96/>

<sup>6</sup> Տես «BP Statistical Review of World Energy», June 2013 ([http://www.bp.com/content/dam/bp/pdf/statistical-review/statistical\\_review\\_of\\_world\\_energy\\_2013.pdf](http://www.bp.com/content/dam/bp/pdf/statistical-review/statistical_review_of_world_energy_2013.pdf)):

<sup>7</sup> Տես «Իրան-Յայաստան գազատարի կառուցման պայմանագիր», 2004թ. (<http://www.mfa.am/hy/country-by-country/ir/>):

<sup>8</sup> Տես «Ռուսաստանը ողջունում է Իրան-Յայաստան գազամուղի շինարարության համաձայնագիրը», 18 փետրվարի 2005 (<http://www.panarmenian.net/arm/world/news/12151/>):

<sup>9</sup> Տես ««Кто сколько платит за российский газ (долларов за 1 тыс. куб. м)» (<http://sobesednik.ru/rassledovanie/20140406-gazovaya-dubina-rossii-kak-izmenitsya-stoimost-gaza-iz-za-k>):

մաց Հայաստանի կառավարությունը ստիպված էր վաճառել «Հայօռոսգազարդի» բաժնետոմսերի 20%-ը<sup>10</sup>:

2013թ սեպտեմբերի 3-ի՝ Մաքսային միություն մտնելու մասին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանի եւ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի համատեղ հայտարարությունից հետո երկողմ բանակցություններով կնքված նոր պայմանագրով ՀՀ-ում գագի գնի ձեւավորումը կապվեց ներուսաստանյան գներին<sup>11</sup>: Գագի գինը ՀՀ-ի համար կազմեց 189\$:

2010թ. աճել է նաեւ Իրանից արտահանվող գագի գինը, Իրան-Թուրքիա սահմանին 350 դոլար է 1000 խորանարդ մետրի համար: Գագի գինը բարձրացրել է նաեւ Ադրբեյջանը, որը 2011թ. գազը թուրքիային՝ Վրաց-թուրքական սահմանում, վաճառում է 290 դոլարով: Իրանից գագի ներմուծումը եւ ընդհանրապես գազամուղի առկայությունը, կարելի է ասել, ամրապնդում են Հայաստանի Հանրապետության Էներգետիկ անվտանգությունը՝ բարձրացնելով նոր մակարդակի: Հասկանալի է, որ տարածաշրջանում նոր ճգնաժամերի եւ հատկապես ռազմական բախման դեպքում Իրան-Հայաստան գազամուղը լիովին կարող է կատարել իր դերը՝ որպես այլընտրանքային աղբյուր ՀՀ գազ ներմուծելու համար:

Գևային այս պայքարում Հայաստանը համեմատաբար ցածր գնով գազ ստանալ երկար ժամանակ չէր կարող, եւ ռուսական գագի գնի աճը շարունակական կլինի, իսկ թե ինչքանով կհամաձայնի մեզ գազ վաճառել Իրանի հսկամական Հանրապետությունը՝ այս հարցի պատասխանը հնարավոր կլինի ստանալ, երբ կայանան երկկողմ բանակցություններ:

Հայ-ռուսական Էներգետիկ համագործակցության կարեւոր ուղղություններից է նաեւ Մեծամորի ատոմակայանի նոր Էներգաբլոկի կառուցումը: Հայկական աԵԿ ապահովում է Հայաստանի Էլեկտրաէներգիայի պահանջարկի մինչեւ 42%-ը, հետեւաբար՝ ատոմակայանի աշխատանքը ռազմավարական նշանակություն ունի: Սակայն Եվրամիությունը պահանջում է փակել Մեծամորի աԵԿ՝ որա համար ժամկետ սահմանելով 2016թ.:

Փակման հարցը դրված է նաեւ Եվրամիության «Եվրանեստ» նոր քաղաքականության օրակարգում<sup>12</sup>: Սակայն աԵԿի փակումը Հայաստանի Էներգահամակարգը նոր դժվարությունների առաջ կկանգնեցնի, հետեւաբար՝ կարեւորվում է փոխարինող նոր հզորությունների ստեղծումը: Վերջին տարիներին, Երեւանի եւ Քաջանի շենքերի վերագինմամբ հզորացել են այդ կայանների հնարավորությունները, սակայն աԵԿը ոչ միայն Էներգետիկ, այլև Հայաստանի անվտանգային քաղաքականության կարեւորագույն բաղկացուցիչներից մեկն է, որի փակումը, նույնիսկ այլընտրանքային Էներգիայի առկայության դեպքում, չի բխում Հայաստանի Հանրապետության շահերից:

Ինչպես նշեցինք, ՀՀ-ում արտադրվող Էլեկտրաէներգիայի 42%-ը ապահովում է Մեծամորի ատոմակայանը, որի փակումը կնվազեցնի ՀՀ Էներգետիկ շուկայի ինքնաբավորթյան մակարդակը՝ սպառնալով պետության Էներգետիկ անվտանգությանը: ՀՀ կառավարությունը որոշել է Հայաստանի ատոմային Էլեկտրակայանի 2-րդ բլոկը շահագործումից հանելուց հետո փոխարինել այլ արտադրական հզորություններով<sup>13</sup>: Ըստ մասնագետների՝ 2-րդ բլոկը նվազագույն ծախսերով փոխարինելու նախընտրելի տարրերակն ատոմային նոր բլոկի կառուցումն է<sup>14</sup>:

<sup>10</sup> Տես Գագի մասին համաձայնագիրը լուրջ եւ կարեւոր գործարք է Հայաստանի համար. Էկոնոմիկայի նախարար, [http://arka.am/am/news/economy/\\_gazhamacaynagir176/#sthash.Ojar6dCi.dprw](http://arka.am/am/news/economy/_gazhamacaynagir176/#sthash.Ojar6dCi.dprw)

<sup>11</sup> Տես «ՀՀ նախագահ Սերժ Սարգսյան եւ ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը ստորագրել են համատեղ հայտարարություններ» (<http://www.president.am/hy/press-release/item/2013/09/03/President-Serzh-Sargsyan-and-President-Vladimir-Putin-joint-statement/>):

<sup>12</sup> Տես «Communication from the commission to the European parliament and the council. Eastern Partnership» {COM(2008) 823}. Commission staff working document. Commission of the European communities, Brussels, SEC(2008) 2974/3 ([http://eeas.europa.eu/eastern/docs/sec08\\_2974\\_en.pdf](http://eeas.europa.eu/eastern/docs/sec08_2974_en.pdf)):

<sup>13</sup> Տես ՀՀ կառավարության 2007թ. նոյեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության դրույթներով նախատեսված ՀՀ Էներգետիկայի նախարարության գործունեության ծրագիրը հաստատելու մասին», հմ. 1296-Ն որոշումը (<http://www.dpf.am/uploads/MoEn%20NSS.pdf>):

<sup>14</sup> Տես նոյն տեղում:

«Յայաստանի Յանրապետությունում նոր միջուկային Էներգաբլոկ(ՆԵՐ)ի կառուցման մասին» 2009թ. հոկտեմբերի 27-ին ընդունված ՀՀ օրենքի համաձայն՝ կառավարությունը որոշել է կառուցել նոր միջուկային Էներգաբլոկ՝ մինչեւ 1200 մեգավատ ընդհանուր հզորությամբ<sup>15</sup>:

Նոր միջուկային Էներգաբլոկի կառուցման ծրագիրն իրականացնելու նպատակով հիմնվել է «ՄեծամորԷներգաատոմ» ՓԲԸ, որը, որպես սեփականատեր եւ շահագործող ընկերություն, նոր միջուկային Էներգաբլոկի նախագիծը մշակողն է<sup>16</sup>: Նոր Էներգաբլոկի կառուցման համար «ՄեծամորԷներգաատոմ» ՓԲԸ-ն առաջարկել է ռուսական 1060 ՄՎու հզորության աԵԿ-92 մոդելը, որը ԶԳԷՌ-1000 տիպի ռեակտորի բարելավված տարբերակն է՝ համարված անվտանգության լրացուցիչ՝ պասիվ եւ ակտիվ համակարգերով, որոնք համատեղում են անվտանգ եւ բնականոն շահագործման գործառությունները<sup>17</sup>:

Սակայն, ըստ շատ մասնագետների, Էներգաբլոկի կառուցման ռուսական նախագիծը ՀՀ-ում Էներգետիկ սպառման փոքր շուկայի, Էներգաբլոկի բարձր գնի (4-5 մլրդ դոլար) եւ ՀՀ-ի տարածք նման հզորության միջուկային Էներգաբլոկի սարքավորումներ տեղափոխելու տեխնիկական դժվարությունների պատճառով կումերցիոն տեսանկյունից շահավետ չէ, ինչն էլ խոչընդոտ է ներդրումների ներգրավման եւ Էներգաբլոկի կառուցման համար:

Ներկայում աշխատում է Մեծամորի կայանի միայն մեկ Էներգաբլոկը՝ մոտ 407,5 մեգավատտ հզորությամբ: Ռուսական կողմը հայտարարում է, որ նոր Էներգաբլոկի մոտավոր արժեքը կկազմի 4-5 մլրդ դոլար: Նոր ատոմակայանի գինը թերեւս որոշակի հարցեր է առաջանաւ փորձագիտական շրջանակներում, քանի որ պարզ չէ, թե ինչու հենց այդ գինն է նշվում, եթի նմանատիպ աԵԿի համար Հնդկաստանից «Ռուսատոմ» պահանջել է ընդամենը 3 մլրդ դոլար գումար<sup>18</sup>:

Տրագի իրականացումը կբարձրացնի Յայաստանի Էներգաանվտանգության մակարդակը, Յայաստանը կկարողանա մեծացնել Էլեկտրաէներգիայի արտահանման հնարավորությունները, իսկ արտահանման համար, գոնե առայժմ, մենք միայն մեկ ուղղություն ունենք՝ իրանի հսկամական Յանրապետություն:

Ռուսական կողմը հայտարարել է, որ պատրաստ է իրականացնել այս ծրագիրը եւ ներդնել գնի 20%-25%-ը՝ մոտ 1 մլրդ դոլար, սակայն ատոմակայանի կառուցման համար հայտարարված միջազգային տեսներներն այդպես ել անարձագանք մնացին այլ ներդրողների կողմից<sup>19</sup>: Վերջիններս չեն շտապում գումարներ տրամադրել այս ծրագրին, քանի որ չեն տեսնում նոր ատոմակայանի բիզնես հեռանկարը, բացի դրանից՝ շատ ներդրողներ չեն ցանկանում աշխատել ռուսական կողմի հետ: Յետեւաբար՝ նոր ԱԵԿ-ի կառուցումը հնարավոր կլինի, եթե՛ Ռուսաստանը ընդունի քաղաքական որոշում եւ ամբողջովին ֆինանսավորի կայանի կառուցումը, քանի որ տևտեսական շահույթ այս ծրագրից ակնկալել, գոնե առաջիկա մի քանի տարիների համար, դժվար կլինի:

Այսուամենայիկ, չնայած առկա խնդիրներին, հայ-ռուսական Էներգաերկխոսությունը բավականին բարձր մակարդակի վրա է, եւ քաղաքական ու տևտեսական փոփոխություններով Յայաստանը կարող է ռազմավարական հարաբերություններն ավելի բարձր մակարդակի հասցնել նոր աԵԿի կառուցման միջոցով:

Սակայն ժամանակն է, որ Յայաստանի Յանրապետությունը Էներգահամակարգի ուժեղացման, նոր ներդրումների ապահովման եւ Էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման համար սկսի բանակցություններ վարել այլ տերությունների հետ, որոնք տիրապետում են միջուկային նորագույն

<sup>15</sup> Տես «Յայաստանի Յանրապետության նոր միջուկային Էներգաբլոկ(ՆԵՐ)ի կառուցման մասին» օրենքը (<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=3201&Reading=2>):

<sup>16</sup> Տես ՀՀ կառավարության ««ՄեծամորԷներգոատոմ» փակ բաժնետիրական ընկերության ստեղծման հիմնադիր պայմանագրին եւ կանոնադրությանը հավանություն տալու մասին» որոշումը (<http://www.gov.am/files/meetings/2009/4406.pdf>):

<sup>17</sup> Տես «Յայաստանի նոր միջուկային Էներգաբլոկի բնապահպանական (շրջակա միջավայրի վրա ազդեցության) հաշվետվություն» ([http://www.mineenergy.am/hy/en\\_atomhashvetvut](http://www.mineenergy.am/hy/en_atomhashvetvut)):

<sup>18</sup> Տես «Nuclear Power in India» (<http://www.world-nuclear.org/info/Country-Profiles/Countries-G-N/India/#.UmK1LvlHLA0>):

<sup>19</sup> Տես «Ռուսաստանը կմասնակցի Յայաստանում նոր ատոմակայանի կառուցման մրցույթին», 6 փետրվարի 2008 (<http://www.ecolur.org/hy/news/nuclear-energy/russia-participates-in-power-station-tender/20/>):

տեխնոլոգիաների եւ պատրաստ են նոր Եներգաբլոկի կառուցման համար ներդրումներ կատարել: Կարեւոր է նաեւ, որ այդ տերությունները աշխարհառազմավարական հետաքրքրություններ ունենան Հարավային Կովկասի եւ ընդհանրապես Մեծ Մերձավոր Արեւելքի տարածաշրջանում:

## **2. Եներգետիկ անվտանգության համակարգերի առանձնահատկությունները**

Եներգետիկ անվտանգությունը ժամանակակից աշխարհաքաղաքականության մասնագետների հետաքրքրության կարեւորագույն ուղղություններից մեկն է: Կա կարծիք, որ Եներգաանվտանգության լիարժեք համակարգ գոյություն չունի, Եներգակիր թե՛ Ներմուծող, թե՛ արտահանող երկրները հավասարապես խոցելի են այս առումով:

Այսինքն՝ Եներգետիկ անվտանգության համակարգը հավասարապես անհրաժեշտ է ոչ միայն Ներմուծող, այլև արտահանող պետություններին: Եթե առաջիններն առանց Եներգետիկ Ներմուծման կայուն համակարգի չեն կարող զարգացնել իրենց տնտեսությունները, ապա երկրորդները չեն կարող ընդհանրապես գոյատել առանց Եներգակիրների կայուն արտահանման ու վաճառքի: Յետեւաբար՝ հարկավոր է խորքային առումով ուսումնասիրել Եներգետիկ անվտանգություն հասկացության տեսական եւ գործնական հիմքերը՝ հասկանալու համար այդ գործոնից կախման մեջ գտնվող պետությունների վրա դրա ազդեցության աստիճանը:

Եներգաանվտանգության արեւմտյան մոդելը բաղկացած է մի շարք հիմնական սկզբունքներից, որոնցից կարելի է առանձնացնել թերեւ 2-ը.

1. մատչելիությունը՝ ամբողջ աշխարհում ապահովել Եներգիայի բոլոր աղբյուրների հասանելիությունը՝ Ներառյալ ածուխ, նավթ եւ գազ, մինչեւ արդյունահանվող վառելիքի ժամանակաշրջանի ավարտը,
2. Եներգախնայողությունը՝ հնարավորինս քիչ Եներգիայի օգտագործմամբ նվազեցնել Եներգետիկ կորուստները եւ ապահովել պահանջարկը:

Եներգետիկ անվտանգության նշված սկզբունքները ծեւավորվել են դեռ անցյալ դարի 70-ական թվականներին՝ 1973թ. նավթային հայտնի Եմբարգոյից հետո, երբ Արեւմուտքը որոշեց նվազեցնել իր կախվածությունը արաբական նավթից, որպեսզի վերջինիս գրկի ճնշում գործադրելու Եներգետիկ լծակից:

Եներգետիկ՝ անխտիր բոլոր աղբյուրների հասանելիության տրամաբանությունը դրված է նաեւ Եվրամիության նոր ռազմավարության հիմքում, եւ պաշտոնական Բյուլետելը առաջ է մղում «Հարավային միջանցք» Եներգետիկ նախագիծը, որի առանցքային ծրագրերից են NABUCCO, TAP եւ այս տիպի այլ գազամուլտները<sup>20</sup>: Նշված տրամաբանությամբ է շարժվում նաեւ ԱՄՄ-ը, որը փորձում է հնարավորինս հասանելի դարձնել գազի ու նավթի բոլոր պաշարները՝ փորձելով ազդել Եներգակիրների համաշխարհային շուկայի եւ գների ծեւավորման քաղաքականության վրա:

Եներգետիկ բոլոր աղբյուրների հասանելիության սկզբունքը թերեւս այս մոդելի առանցքն է, եւ սա եր պատճառներից մեկը, որ Արեւմուտքը իր ուշադրությունը դարձրեց նաեւ դեպի Հարավային Կովկաս եւ Կենտրոնական Ասիա, թեեւ այդ տարածաշրջանները միասին իրենց Եներգետիկ հնարավորություններով համեմատելի չեն ոչ թե Պարսից ծոցի, այլ այսպիսի փոքր պետությունների հետ, ինչպիսիք են Թուվեյրը ու Թաթարը: Չնայած դրան, հասանելիության սկզբունքից Ելելով, Արեւմուտքը Եներգետիկ հաղորդակցության նոր համակարգերի նախագծման եւ կառուցման աշխատանքներ սկսեց, եւ տարածաշրջանում շահագործման հասձնվեցին մի շարք խորովակաշարեր՝ ամրապնդելով Եներգակիրների արտահանման արեւմտյան ուղղությունը:

<sup>20</sup> Stu «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» ([http://ec.europa.eu/energy/publications/doc/2011\\_energy2020\\_en.pdf](http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf)):

## **2-1. Եներգետիկ անվտանգությունը Յարավային Կովկասում**

ԽՄՀՄ-ի փլուզումից հետո Յարավային Կովկասում ծեւավորվել է Եներգետիկ անվտանգության երկու համակարգ, որոնք պայմանականորեն կարելի է անվանել **տարածաշրջանային եւ տեղական**: Առաջինի հիմքում ընկած է Ադրբեյչանի, Վրաստանի եւ Թուրքիայի տարածքով անցող նոր Եներգետիկ միջանցքը՝ Բաքու-Զեյխան, Բաքու-Սուլիսա եւ Բաքու-Երգրում խողովակաշարերով, որին կարող է ավելանալ Տրանսանատոլիհական՝ TANAP գազամուղը: Ինչպես հայտնի է, Եներգետիկ այս միջանցքի ստեղծմանը նպաստել է Արեւմուտքը իր Վերագգային մի շարք ընկերությունների ակտիկ մասնակցությամբ: Ադրբեյչանից սկիզբ առնող Եներգետիկ նոր միջանցքի ծեւավորման աշխատանքներին մասնակցում են անգլո-ամերիկյան «Բրիթիշ Փերուլիում», նորվեգական «Սթաթօլ», ամերիկյան «Էքսոն-Մոբիլ», թուրքական ԲՈԹԱՍ եւ այլ ընկերություններ:

Յայաստանի Յանրապետության Եներգանավտանգության համակարգը, որը կարելի է անվանել տեղական, սկսեց ծեւավորել նաեւ Եներգետիկ ճգնաժամից դուրս գալու պահանջով:

Յայաստանը, «դուրս մալով» միջազգային Եներգետիկ այս նախագծերից, ստիպված էր ծեւավորել Եներգանավտանգության սեփական համակարգը Ռուսաստան-Վրաստան-Յայաստան եւ Իրան-Յայաստան գազամուղների կառուցմամբ եւ շահագործմամբ, Էլեկտրաներգիայի արտադրության եւ բաշխման համակարգերի սեփական հզորությունների ստեղծմամբ, նաեւ նոր ատոմային Եներգաբլոկի կառուցման նախագծով: Յայաստանը այսօր արդեն էլեկտրաներգիայի արտադրության ավելցուկ ունի եւ Եներգետիկ նոր հզորությունների գործարկման դեպքում կարող է դառնալ Էլեկտրաներգիայի արտահանման հիմնական երկիր տարածաշրջանում<sup>21</sup>:

Յայաստանում էլեկտրաներգիայի արտադրության հզորությունները կազմում են տարեկան մոտ 8 մլրդ կիլովատտ/ժամ, իսկ սպառման պահանջարկը 7 մլրդ է: Նոր ատոմակայանի կառուցման, Վրաստի վրա իրանցիների հետ նոր հիդրոկայանների շահագործման եւ վերջապես՝ Յրազդանի ջէկի 5-րդ բլոկի ողջ հզորությամբ աշխատանքի դեպքում (այս բլոկը գործարկվել է 2013 դեկտմերի 2-ին<sup>22</sup>) Յայաստանի էլեկտրաներգիայի ավելցուկը կկրկնապատկվի, նաեւ կավելանան դրանք արտահանելու հնարավորությունները, հետեւաբար՝ կամրապնդվի նաեւ Եներգետիկ անվտանգության մակարդակը:

Ըստ մասնագետների՝ Ներկայում Յայաստանի Եներգետիկայի զարգացման գերակա ուղղություններն են.

- ատոմային Եներգետիկան,
- տարածաշրջանային համագործակցությունը եւ ինտեգրումը,
- առաջնային Եներգիայի աղբյուրների եւ ներկրման ուղիների բազմազանեցումը,
- վերականգնվող Եներգիայի աղբյուրների լրիվ եւ արդյունավետ օգտագործումը եւ Եներգախնայողությունը<sup>23</sup>:

Այս ուղղություններով էլ Յայաստանը շարունակում է զարգացնել եւ ամրապնդել Եներգետիկ անվտանգության համակարգը, ինչը կնպաստի տարածաշրջանում մեր պետության դիրքերի ամրապնդմանը:

Վերը նշված Եներգետիկ երկու համակարգեր՝ տարածաշրջանային եւ տեղական, իրար հետ համեմատելի չեն ծավալների, ֆինանսական ներդրումների եւ միջազգային հետաքրքրության տեսակետից, սակայն Եներգանավտանգության առումով, ինչպես ցույց տվեց 2008թ. Վրաց-ռուսական ռազմական բախումը, բավականին մոտ են: Այդ ճգնաժամը բացահայտեց այս երկու համակարգերի հուսալիությունը ռազմական գործողությունների պայմաններում՝ դրանց ուժեղ եւ խոցելի կողմերը:

<sup>21</sup> Տես Կ. Կարապետյան, Յայաստանի դերը Յարավային Կովկասի տարածաշրջանի Եներգետիկ անվտանգության ապահովման գործում: «21-րդ դար», 2008, հմ. 4 (22):

<sup>22</sup> ՀՀ Եւ ՌԴ նախագահների մասնակցությամբ բացվեց Յրազդանի ՋԷԿ-ի 5-րդ Եներգաբլոկը.  
<http://www.aysor.am/am/news/2013/12/02/sargsyan-putin-hrazdan/709352>

<sup>23</sup> Տես Ա. Գայսոյան, Վերականգնվող Եներգետիկայի զարգացումը՝ որպես ՀՀ Եներգետիկ անվտանգության ապահովման պետության պաշտպանութեական ամրապնդման երաշխիքներից մեկը: «ՀՀ պաշտպանական-անվտանգային համակարգի բարեփոխման ուղենիշները»: Ե., 2013, էջ 60:

2008թ. օգոստոսյան իրադարձությունների ժամանակ դադարեց գործել Բաքու-Ջեյհան նավթամուղը, սակայն դա չազդեց համաշխարհային նավթի գնագոյացման վրա: Սա մեկ անգամ եւս ապացուցում է, որ գլոբալ էներգետիկ շուկայում՝ հատկապես նավթի, Յարավային Կովկասի էներգետիկ միջանցքը եական դերակատարություն եւ ազդեցություն չունի: Մասնավորապես պարզ դարձավ նաեւ, որ հարավկովկասյան էներգամիջանցքը հուսալի չէ, եւ նույնիսկ փոքր ռազմական բախումը հանգեցրեց դրա աշխատանքի ընդհատմանը: Այս իրավիճակը սպառնալիք ստեղծեց Վրաստանի եւ Ադրբեյջանի էներգետիկ անվտանգությանը, որը ուղղակիորեն կախված է էներգետիկ միջանցքի անխափան գործությունից:

Սպառնալիք ստեղծվեց նաեւ Յայաստանի համար, որը նավթամթերքների ներկրման խնդիրներ ունեցավ: Յետեւաբար՝ անվտանգության երկու համակարգերն եւ կարիք ունեն վերանայման. հայաստանյանը՝ նավթամթերքների այլընտրանքային ներմուծման հարցում, իսկ հարավկովկասյան էներգամիջանցքինը՝ կայունության ամրապնդման առումով:

Վրաց-ռուսական ճգնաժամը ապացուցեց Յայաստանի կարեւորությունը հարավկովկասյան էներգամիջանցքի անվտանգության պահպանման եւ դրա կայուն շահագործման խնդրում, եւ որ առանց պաշտոնական Երեւանի համագործակցության այդ միջանցքի կայուն աշխատանքի մասին խոսելը հեռանկարային չէ:

Յայաստանյան էներգամանվտանգության համակարգի դերի բարձրացման համար կարեւոր է իրանից՝ Թավրիզ-Երասխավան նավթամթերքի խողովակաշարի (թենգինամուղի) կառուցումը, ինչը եականորեն կամրապնդի մեր Երևի անվտանգության մակարդակը:

Էներգետիկ անվտանգության երկու համակարգերը գնահատելիս պետք է հաշվի առնել, որ դրանցից մեկը ստեղծվել է էներգակիրների ներմուծման, մյուսը՝ արտահանման տրամաբանության հենքի վրա, հետեւաբար՝ դրանց աշխատանքների համեմատությունը շատ դեպքերում պայմանական է եւ նպատակ է հետապնդում ցույց տալ ճգնաժամերի պայմաններում դրանց գործունեության հնարավությունները:

Միջազգային ընկերությունների ներկայությունը էներգակիրների արտահանումը ոչ միայն չի դարձնում ավելի ապահով, այլև շատ դեպքերում վտանգում է կայուն աշխատանքը: Յետեւաբար՝ կարեւոր է հասկանալ տարածաշրջանի հակամարտությունների վրա Էներգետիկ գործունի ազդեցության աստիճանը՝ գնահատելու համար դրա կայունությունն ու անվտանգությունը Յարավային Կովկասում:

### 3. Էներգետիկ աշխարհաքաղաքանությունը եւ զսպման գործուները Յարավային Կովկասում

Յարավային Կովկասում խաղաղության պահպանումը նախ եւ առաջ պայմանավորված է ռազմական զսպման քաղաքականության արդյունավետությամբ, սակայն տարածաշրջանի վերածումը էներգետիկ միջանցքի այդ քաղաքականությանը նոր որակ է հաղորդում: Ըստ ամերիկյան վերլուծաբանների՝ Յարավային Կովկասի աշխարհաքաղաքական նշանակությունը բացատրվում է աշխարհագրական դիրքով՝ ելքով դեպի Կենտրոնական Ասիայի Էներգակիրներով հարուստ տարածաշրջան, որը պետք է ապահովի Էներգակիրների լրացուցիչ պաշարների հոսքը Եվրոպա եւ ընդհանրապես համաշխարհային շուկա<sup>24</sup>:

Ինչպես արդեն նշել ենք, տեսական այս դրույթի իրականացումը՝ դեպի Եվրոպա Էներգակիրների հոսքի ապահովումը, սկսվեց դեռ անցյալ դարի 90-ական թվականների Երկրորդ կեսից՝ Բաքու-Սուլիսա, Բաքու-Ջեյհան նավթամուղների եւ Բաքու-Երզրում գազամուղի կառուցմամբ\*: Բացի նշված խողո-

<sup>24</sup> Տես 3. Եջեզинскиий. Վելիկայա շախմատայի ծովական, ս. 146; B. Shaffer. U.S. Policy toward the Caspian Region: ...:

\* 90-ական թվականներին կար այս համոզմունքը, որ Կասպից ավագանը նոր ջուրվեյթ է եւ էներգակիրների պաշարներով չի զիջում Պարսից ծոցին: Սակայն հետազայտման ապացուցվեց, որ Կասպից ծովի ավագանում Աղրբեշանի, Թուրքմենստանի, Ղազախստանի եւ Ուզբեկստանի նավթի պացուցված պաշարները միասին կազմում են համաշխարհայինի 3,7%-ը, մինչեւ միայն ջուրվեյթի նավթի պաշարները՝ 8,4%-ը: Տարածաշրջանի գազի պաշարները կազմում են համաշխարհայինի մոտ 9,5%-ը՝ զիջելով Պարսից գազի պաշարների՝ 13,5% (տես «BP Statistical Review of World Energy», 2010 ([www.bp.com/statisticalreview](http://www.bp.com/statisticalreview)):

Վակաշարերից՝ քննարկվում են TANAP, NABUCCO, TAP, AGRI, ITGI, White Stream<sup>\*\*</sup> եւ այլ գազամուղ-ների ծրագրերը, որոնք գազը Կասպից ծովի ավագանից եւ Մերձավոր Արևելքից, հեղուկ կամ գա-զային վիճակում, պետք է փոխադրեն դեպի Եվրոպա: Այս նախագծերը ավելի են մեծացնում տարա-ծաշրջանի նշանակությունը, քանի որ հարավկովկասյան միջանցքը սկսում է Եվրամիության Էներգե-տիկ նոր ռազմավարության եւ անվտանգության համակարգի՝ «Յարավային Էներգետիկ միջանցք» ծրագրի մաս կազմել<sup>25</sup>:

Էներգետիկ նախագծերի իրականացմամբ Յարավային Կովկասում զսպման եւ կայունության հաս-տատման քաղաքականությունը դառնում է Էներգետիկ միջանցքի անխափան գործունեությամբ շա-հագրգիռ տերությունների ռազմավարության կարեւոր քաղկացուցիչը: Զանի որ զսպման քաղաքակա-նության հիմքում նաեւ հակառակ կողմից հնարավոր ագրեսիվ գործողությունների կանխարգելում է, ապա հարավկովկասյան Էներգետիկ միջանցքը կարելի է դիտարկել որպես տարածաշրջանում նման քաղաքականության իրականացման գործիքարանի բաղադրիչ:

Յարավային Կովկասի Էներգետիկ միջանցքի կայուն եւ անխափան գործունեության գաղափարը մեծ տերություններին ստիպում է կարեւորել խաղաղության պահպանումը տարածաշրջանում եւ հատկապես զգոյշ լինել առկա սառեցված հակամարտությունների շուրջը ծավալվող իրադարձու-թյունների նկատմամբ:

### **3-1. Էներգետիկ գործոնը՝ տարածաշրջանում կայունության ապահովման կարեւոր քաղկացուցիչ**

Էներգետիկ գործոնի դերի ակտիվացումը հանգեցրել է նաեւ դրա քաղաքական ազդեցության մե-ծացմանը տարածաշրջանում ընթացող հակամարտությունների վրա: Յարավկովկասյան Էներգետիկ միջանցքի կայուն աշխատանքին կարող են խոչընդոտել տարածաշրջանի հակամարտությունները, ինչը լրացուցիչ սպառնալիք է այդ միջանցքի գործունեության համար: Յետեւաբար՝ այս երկրները, ո-րոնք կարող են նպաստել տարածաշրջանում անվտանգության մակարդակի բարձրացմանը, լրացու-ցիչ լծակ են ծեռք բերում նաեւ Էներգետիկ այդ միջանցքի կայուն աշխատանքի ապահովման վրա ազ-դելու համար:

Բարքի ռազմատենչ հայտարարությունների ֆոնին պաշտոնական Երեւանը լրացուցիչ խաղա-թուղթ է ծեռք բերում՝ հանդես գալով որպես տարածաշրջանում կայունության ու խաղաղության պահ-պանման կողմնակից:

Էներգետիկ միջանցքի գործարկմամբ տարածաշրջանում նոր լայնածավալ պատերազմի հնարա-վորությունը որոշ չափով նվազել է, քանի որ հարվածի տակ կդրվեն գործող խողովակաշարերի գոր-ծունեությունը եւ նորերի կառուցման հնարավորությունը, այսինքն՝ Արեւմուտքի Էներգետիկ ռազմա-վարական շահերը:

2008թ. օգոստոսյան ճգնաժամը մասամբ հաստատեց այս իրողությունը, երբ Յարավային Օսիայում տեղի ունեցած ռազմական բախումները հանգեցրին տարածաշրջանից Էներգակիրների արտահան-ման ընդհատմանը\*: Բաքու-Ջեյհանի շահագործումից հետո արդեն միջազգային փորձագետները հայտարարում են, որ նավթամուղը տարածաշրջանում կայունության ապահովման՝ զսպման գործի-քարանի կարեւորագույն մասը կկազմի, դարաբաղյան հակամարտության կողմերին կսիմանական հեռու մնալ ռազմական լուծման գայթակղությունից<sup>26</sup>:

\*\* Այս նախագծերով նախատեսվում է Կասպից ծովի ավագանից եւ Մերձավոր Արևելքից Սեւ, Եգեյան եւ Արդիատիկ ծովերով գազի առաքում դեպի Եվրոպա:

<sup>25</sup> Stu «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» ([http://ec.europa.eu/energy/publications/doc/2011\\_energy2020\\_en.pdf](http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf)):

\* Ընդհատումը պայմանավորված էր նաեւ Թուրքիայում Ջրդական աշխատավորական կուսակցության կողմից Բաքու-Ջեյհան խողովակաշարում կատարված ահարեւկությամբ: Սակայն նույնիսկ առանց այդ գործողության էլ «Բրիտիշ Փետրոլիումը» պատրաստվում էր կանգնեցնել նավթի առաքումը խողովակաշարով:

<sup>26</sup> Stu Thomas de Waal. Caucasian Standoff, June 30, 2010 ([http://www.foreignpolicy.com/articles/2010/06/30/caucasian\\_standoff](http://www.foreignpolicy.com/articles/2010/06/30/caucasian_standoff)):

NABUCCO-ի, նմանատիպ այլ խողովակաշարերի՝ TANAP-ի եւ TAP-ի շահագործման դեպքում Եներգետիկ զսպման այս գործիքարանը էլ ավելի կընդլայնվի, քանի որ այս նախագծում Ներդրում կատարող պետությունները եւ Վերազգային նավթային ընկերությունները տարածաշրջանի երկրներից իրենց Ներդրումների անվտանգության որոշակի երաշխիքներ կպահանջեն\*:

Նրանց անհանգստացնում են պաշտոնական Բաքվի ռազմատեսէ հայտարարությունները<sup>27</sup>, նաեւ հայ մասնագետների պնդումները, թե հնարավոր պատերազմի դեպքում խողովակաշարերը կդառնան առաջնային թիրախ<sup>28</sup>: Արեմուտքի համար հարավկովկասյան Եներգետիկ միջանցքի աշխարհառագմավարական կարեւորությունը փորձում է խաղարկել Բաքուն՝ Արեմուտքից պահանջելով դարաբանան հարցում ադրբեջանամետ լուծում<sup>29</sup>՝ սպառնալով Եներգակիրները արտահանել դեպի Ռուսաստան եւ Իրան\*:

Ճանտաժի այս քաղաքականությունը Ադրբեջանը վարում էր Բաքու-Զեյխան խողովակաշարի բանակցային գործընթացի ժամանակ, նույնը փորձում էր օգտագործել նաեւ NABUCCO-ի շուրջը սկիզբ առնող բանակցություններում, համոզված էնք, որ այս քաղաքականությունը կըրկնվի նաեւ Անդրադրիատիկ՝ TAP եւ Անդրանատոլիական՝ TANAP խողովակաշարերի դեպքում: Սակայն իլհամ Ալիեկի իշխանությունն առանց «Եներգետիկ աջակցության» չի կարող գոյատել, եւ նրա քաղաքական ու ֆինանսական կախվածությունը այդ գործոնից չափազանց մեծ է<sup>30</sup>: Ինչպես Բաքու-Զեյխանի դեպքում, պարզ է, որ խողովակաշարի քաղաքականացվածության եւ Արեմուտքի համար նրա դերի կարեւորության, ինչպես նաեւ Բաքվի խուսանավելու մասին կարծիքը չափազանցված է: Եվրամիության կողմից Կենտրոնական Ասիայից գազի տարանցման գործընթացում Ադրբեջանի դերի կարեւորության վերանայումը պայմանավորված է մասնավորապես նաեւ Եվրոպայում թերթաքարային գազի արդյունահանմամբ, հեղուկ գազի ներմուծման ծավալների կտրուկ մեծացման գործընթացով, ինչպես նաեւ Անդրկասպյան գազամուղի կառուցման ահնարինության հաշվառմամբ<sup>31</sup>:

Գազամուղի գործարկման դեպքում Բաքուն պատասխանատվություն է կրելու դրա աշխատանքի անվտանգության հարցում, իսկ դա ուղղակիրեն կախված է դարաբառյան հիմնախնդրում ստատուս քվոյի պահպանումից: Այսինքն՝ NABUCCO-ն կամ դրան հետագայում փոխարինելու եկած որեւէ խողովակաշար տարածաշրջանում Եներգետիկ զսպման գործիքարանի հերթական բաղկացուցիչը կկազմի, եւ Ադրբեջանը չի կարողանա երաշխավորել այդ խողովակաշարի գործունեությունը առանց դարաբանան ճակատում Երկարատեւ խաղաղության պահպանման:

Տարածաշրջանային քաղաքական զարգացումների եւ միջակետական հարաբերությունների վրա Եներգետիկ գործոնի ազդեցությունը պայմանավորված է նաեւ Եներգակիրների համաշխարհային պահանջարկի փոփոխմամբ եւ միջազգային բորսաներում գների շարժով, ինչպես նաեւ տարածաշրջանից գազի ու նավթի արտահանման ծավալների քանակով: Այս տեսանկյունից Ադրբեջանում տեղի են ունե-

\* Բաքու-Զեյխանի ընդհանուր արժեքը, շահագործումից հետո, կազմեց ավելի քան 6,4 մլրդ դրամ, Բաքու-Սուլիմայինը՝ մոտ 1 մլրդ դրամ, իսկ NABUCCO խողովակաշարի ընդհանուր արժեքը նախապես գնահատվում էր 9 մլրդ եվրո: Ըստ «Բրիթիշ վետրոլինում»՝ կառուցման դեպքում դրա իրական արժեքը կհասնի 14 մլրդ եվրոյի:

<sup>27</sup> Stu «Baku may refuse from military rhetoric only after deoccupation of Azerbaijan lands». «Trend», 23.06.2010 (<http://en.trend.az/news/karabakh/1709353.htm>):

<sup>28</sup> Stu U. Մինասյան, Խաղաղության պահպանման մեխանիզմը դարաբառյան հակամարտությունում, զսպման տեսությունը սպառազինությունների ասիմետրիկ մրցավազի պայմաններում, 21.10.2010 ([http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5082](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5082)):

<sup>29</sup> Stu «Ильхам Шабан: NABUCCO еще предстоит решить много вопросов, чтобы выйти на уровень строительства». Интервью с руководителем Центра нефтяных исследований Азербайджана (ЦНИА). ИА «REGNUM», 14.01.2011 (<http://www.regnum.ru/news/1364666.html>):

\* 2010թ. Ադրբեջանը 500 մլն իմ գազ է վաճառել Ռուսաստանին եւ Իրանին:

<sup>30</sup> Stu James Nixey. The South Caucasus: drama on three stages, 22.02.2010 ([http://www.chathamhouse.org/sites/default/files/public/Research/Americas/us0510\\_nixey.pdf](http://www.chathamhouse.org/sites/default/files/public/Research/Americas/us0510_nixey.pdf)):

<sup>31</sup> Stu Г.С. Команджян. Демифологизация NABUCCO и перезагрузка Мадридских принципов - ключ к решению карабахского конфликта. ИА «REGNUM», 25.09.2010 ([www.regnum.ru/news/1329118.html](http://www.regnum.ru/news/1329118.html)):

Նույն գործընթացներ, որոնք պայմանավորված են Էներգակիրների արտահանման նրա հնարավորություններում նկատվող փոփոխություններով:

Աղբեջանը, որի տնտեսական աճը բացատրվում է միայն նավթի ու գազի արտահանման ծավալների աննախադեպ ընդլայնմամբ, հայտնվել է նոր իրողության առջեւ: Յասնելով նավթի արտահանման իր հնարավորության բարձրակետին՝ նա արդեն սկսում է սպառել նավթի հաշվին տարածաշրջանում ռազմավարական առավելություն ստանալու իր ռեսուրսը:

2008-2010թթ. Աղբեջանի նավթի արտահանման ծավալը հասավ 50-51 մլն տոննա տարեկան ցուցանիշի, իսկ արդեն 2011թ. առաջին կիսամյակի տվյալներով՝ Աղբեջանը ԱՊՀ միակ երկիրն էր, որ տեղ արդյունաբերության անկում է գրանցվել<sup>32</sup>: Ըստ Յամաշխարհային բանկի տվյալների՝ հաջորդող տարիներին նրա համախառն ներքին արդյունքի աճը չի գերազանցի 3,6%-ը<sup>33</sup>, իսկ տնտեսական աճի տեմպերի դանդաղումը կշարունակվի<sup>34</sup>:

Նավթային գործոնի թուլացման, հետեւաբար նաեւ տնտեսական աճի դանդաղման մասին փորձագետները նշում են դեռ մի քանի տարի առաջ, շեշտելով, որ Աղբեջանը շուտով կկանգնի լուրջ տնտեսական դժվարությունների առաջ, մասնավորապես՝ Էներգակիրների արտահանման իր պարտականությունները կատարելու գործում: Այս գործընթացը կարող է խորանալ, եթե Աղբեջանում նավթի արտահանման ծավալների նվազման միտումին ավելանա նաեւ միջազգային սակարաններում նավթի գների հնարավոր անկումը:

Աղբեջանում արդյունաբերություն ասելով՝ առաջին պետք է հասկանալ նավթային ոլորտը: 2006թ. նավթարդյունաբերության աճը Աղբեջանում կազմել է 36%, ինչն աննախադեպ բարձր ցուցանիշ էր աշխարհում, սակայն արդեն 2011թ. առաջին 5 ամիսներին նավթարդյունաբերության մեջ անկումը կազմել է 5%, իսկ տարին փակվեց 10,5% նվազմամբ, նույն չնայած եւ ավելի դանդաղ տեմպով շարունակվեց նաեւ 2012թ.<sup>35</sup> եւ կրկնվեց 2013թ.:

Սա չի նշանակում, թե հարավկովկայան Էներգետիկ միջանքը կկորցնի իր գրավչությունը Արեւմուտքի համար, քանի որ տարածաշրջանում նավթային գործոնին փոխարինելու է գալիս գազը, եւ մշակվում են տարածաշրջանից գազի արտահանման մի շարք ծրագրեր, Էներգետիկ անվտանգության գլոբալ համակարգում Կովկաս-կասպյան տարածաշրջանը շարունակում է կարեւոր տեղ գրանցելու:

Սակայն NABUCCO գազամուղի կրճատված West-NABUCCO տարբերակին փոխարինած TAP գազամուղը լավագույն դեպքում շահագործման կիանձնվի 2019թ., իսկ Աղբեջանի գազի ամենամեծ հանքավայրը՝ Շահրեսիզ-2-ը, կազմի ողջ հզորությամբ գործել 2019 - 2020թթ. միայն:

Բացառված չէ, որ առաջիկայում ականատես լինենք Աղբեջանում սոցիալ-տնտեսական իրավիճակի վատթարացման, ինչը որոշակի ազդեցություն կունենա պետության ներքին եւ արտաքին քաղաքականության վրա: Յնարավոր է, որ պաշտոնական Բազուն փորձի սրել իրավիճակը Լեռնային Ղարաբաղի Յանրապետության հետ շփման ողջ ճակատային գծում՝ շեղելու բնակչության ուշադրությունը ներքին խնդիրներից:

Այդ ռեացում ավելի կկարեւորվի Յայաստանի Յանրապետության դերն Արեւմուտքի համար՝ որպես տարածաշրջանում խաղաղության եւ կայունության պահպանմամբ շահագրգության պետության:

<sup>32</sup> Տես «Межгосударственный статистический комитет Содружества Независимых Государств» (<http://www.cisstat.com/rus/macro/azer2.htm>):

<sup>33</sup> Տես «Наименьший рост ВВП среди стран СНГ покажет Азербайджан - Всемирный банк». ИА «REGNUM», 13.01.2011 (<http://www.regnum.ru/news/1364256.html>):

<sup>34</sup> Տես «The World Bank. Azerbaijan at a glance», 25.02.2011 ([http://devdata.worldbank.org/AAG/aze\\_aag.pdf](http://devdata.worldbank.org/AAG/aze_aag.pdf)):

<sup>35</sup> Տես «Межгосударственный статистический комитет Содружества Независимых Государств» (<http://www.cisstat.com/rus/macro/azer2.htm>):

## 4. Թերթաքարային գազի հեռանկարները Եւ Հայաստանի Հանրապետությունը

Վերջին մեկ տասնամյակում «դասական» բնական գազի նոր մրցակից է ի հայտ եկել հանձին թերթաքարային գազի, որի տնտեսական եւ հատկապես քաղաքական հեռանկարների վերաբերյալ բանավեճերը մինչ օրս շարունակվում են: Բնական գազ արտահանող երկրները եւ հատկապես Ռուսաստանը պնդում են, որ դրա արդյունահանումը եւ շահագործումը շատ թանկ են, իսկ հյուսվող պատմությունները ավելի շուտ լեգենդներ են: Գազի ներմուծումից կախման մեջ գտնվող երկրները, ընդհակառակը, հենց թերթաքարային գազի մեջ են տեսնում իրենց «փրկությունը» և երգակիրներ արտահանող պետությունների քաղաքական ու տնտեսական ազդեցությունից:

Թերթաքարային գազի առաջին մշակումները սկսվել են դեռ անցյալ դարի կեսերին ամերիկյան Mitchell Energy & Development ընկերության կողմից, սակայն առաջատար տեխնոլոգիաների բացակայության պատճառով մինչեւ անցյալ դարի 80-ական թվականները լուրջ աշխատանքներ չեն տարվում<sup>36</sup>: Դետագայում, երբ մշակվեց այսպես կոչված հորիզոնական հորատանցման տեխնոլոգիան, թերթաքարային գազը մատչելի դարձավ, սակայն զանգվածային շահագործումը մինչեւ 21-րդ դար բացակայում էր թերթաքարային գազի տեխնոլոգիաների թանկության եւ միջազգային շուկայում գազի ցածր գների պատճառով:

Սակայն դեռ անցյալ դարի 90-ական թվականներին մի շարք նավթային խոշոր ընկերություններ՝ ExxonMobil, ConocoPhillips, Chevron եւ այլն, ամերիկյան հեղինակավոր Booz Allen Inc. ընկերությանը առաջարկեցին իրականացնել ռազմավարական մշակումներ՝ ոչ սովորական (unconventional)\* գազի հնարավոր արդյունահանման հեռանկարները եւ զարգացման ընդհանուր միտումները հասկանալու համար<sup>37</sup>: Իրականացրած ռազմավարական խաղի (wargame) օգնությամբ հնարավոր եղավ պայցուցել, որ մեծ արագությամբ ընդլայնվող համաշխարհային տնտեսության համար թերթաքարային գազը կդառնա կենսական պահանջ ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նկատառումներից ելնելով: Դետագա զարգացումները մասամբ ապացուցեցին այս կանխատեսման ճշմարտացիությունը:

Թերեւս հաջողված է ԱՄՆ-ի փորձը, որը նախ նվազեցրեց իր էներգետիկ կախվածությունը արաբական նավթից, ապա սկսեց լուրջ աշխատանք իրականացնել՝ ներմուծվող գազից իր կախվածությունը թուլացնելու համար\*: 2004թ. ԱՄՆ-ում կտրուկ ավելացան թերթաքարային գազի արդյունահանման ծավալները<sup>38</sup>: Ներկայում գազի արդյունահանման տեմպերով ԱՄՆ-ը գերազանցում է նույնիսկ Ռուսաստանի Դաշնությանը:

ԱՄՆ-ը, որը գազի սպառման ծավալով աշխարհի թիվ մեկ երկիրն է, կարողացավ ոչ միայն նվազեցնել իր կախվածությունը բնական հեղուկ գազի ներմուծումներից, որտեղ, ի դեպ, առաջատարը Քաթարն էր, այլև փորձում է հեղուկացված գազ արտահանել:

ԱՄՆ-ը, սակայն, փորձում է ոչ այնքան հեղուկ գազ արտահանել, որքան «էներգետիկ անկախության» իր հաջողված փորձը փոխանցել Եվրամիության անդամ երկրներին՝ առաջարկելով թերթաքարային գազի նոր ռազմավարության մշակում եւ իրականացում: Արեւելյան Եվրոպայում ԱՄՆ-ի թիվ մեկ դաշնակից համարվող Լեհաստանը սկսեց կիրառել այդ փորձը ամերիկյան ընկերությունների օգնությամբ՝ որոնողական աշխատանքներ ծավալելով ողջ երկրի տարածքով. արդյունքները սպասել չտվեցին:

<sup>36</sup> Տես U. Սարգսյան, Թերթաքարային գազի ուրվականը: «Նորավանք», 03.02.2011 ([http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=5346](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=5346)):

\* Ոչ սովորական (unconventional) գազ ասելով սովորաբար նկատի ունեն թերթաքարային գազը, ածխային մեթանը եւ այսպես կոչված կոշտ գազը:

<sup>37</sup> Տես «Wargameing for leader. Play for Energy». New York, 2009, P. 144:

\* Ներկայում ԱՄՆ-ում սպառվող նավթի միայն 8%-ն է ներմուծվում Պարսից ծոցից, իսկ գազի սպառման ծավալում ներմուծումը կազմում է միայն 5%:

<sup>38</sup> Carole Nakhle, The effect of the shale revolution on the world's gas producers and consumers, <http://www.worldreview.info/content/effect-shale-revolution-worlds-gas-producers-and-consumers>

2011թ. Լեհաստանի վարչապետ Դոնալդ Տուսկը անձամբ մասնակցեց թերթաքարային գազի առաջին հորատանցքի բացման արարողությանը: Ըստ նախնական հաշվարկների՝ Լեհաստանի արեւելյան հատվածում կան գազի մեծ պաշարներ: Որոնդական աշխատանքներ իրականացվում են նաեւ Ռուբախիայում եւ Գերմանիայում: Լեհաստանի վարչապետը հայտարարել է, որ արդեն 2014թ. կսկսվի գազի արդյունաբերական շահագործումը<sup>39</sup>:

Թերթաքարային գազի շահագործման առաջին փորձը կարող է եականորեն փոխել ոչ միայն Լեհաստանի Էներգետիկ անվտանգության համակարգը՝ նվազեցնելով նրա կախվածությունը Ռուսաստանից, այլև կիսանի Էներգետիկ նոր հումքի արդյունահանումը ամրող Եվրոպայում: Ինչպես նշում են մասնագետները, թերթաքարային գազը իսկական հեղափոխություն կարող է առաջացնել Էներգետիկայի ոլորտում՝ ազդելով անվտանգության գործող համակարգերի եւ մշակվող ռազմավարությունների վրա:

Լեհաստանի վարչապետը համոզված է, որ նոր հանքավայրերը հնարավորություն կտան ոչ միայն բավարարելու սեփական պահանջարկը, այլև սկսելու գազի արտահանում Եվրոպական մյուս պետություններ՝ նվազեցնելով նաեւ նրանց կախվածությունը Ռուսական գազի ներկրումից: Թերթաքարային գազի արդյունաբերական շահագործումը կազդի նաեւ գազի միջազգային գների վրա, որոնք, Ռուսաստանի պնդմամբ, ներկայում «կապված» են նավթի գներին եւ, ըստ շատ մասնագետների, արհեստականորեն բարձրանում են նավթի պահանջարկի եւ գների ավելացման հետ մեկտեղ:

Վրեւելյան Եվրոպայում թերթաքարային գազի մեծ պաշարների հայտնաբերումը կարող է վերջ դնել Ռուսական մենաշնորհին այդ բնագավառում: Սակայն այս ծրագիրը նաեւ կիարվածի Եվրամիության կողմից հովանավորվող «Հարավային միջանցք» Էներգետիկ նախագծին եւ հատկապես NABUCCO, TANAP, TAP եւ Նմանատիպ այլ ծրագրերի իրականացմանը՝ դրանք դարձնելով ոչ շահավետ, գրկելով այդ նախագծերը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական գրավչությունից:

Հասկանալի է, որ Նման նախագծի իրականացումը եւ «Հարավային միջանցքի» Նշանակության նվազեցումը բխում են նաեւ Հայաստանի շահերից: Էներգետիկ միջանցքի շնորհիվ քաղաքական օգուտներ շահելու Աղրբեջանի փորձերը հայտնի փաստեր են, NABUCCO կամ դրան փոխարինող այլ խողովաճարի վերաբերյալ բանակցություններն Աղրբեջանը արդեն այսօր օգտագործում է ընդդեմ Հայաստանի:

Թերթաքարային գազի արդյունաբերական շահագործումը հետաքրքրում է նաեւ Հայաստանին եւ քաղաքական, եւ տնտեսական շարժադրթելուով: 2011թ. հունիսի 2-ին Հայաստանի Հանրապետության Էներգետիկայի նախարար Արմեն Մովսիսյանը եւ ԱՄՆ-ի ռեսպան Մարի Յովանովիչը Հայաստանում թերթաքարային գազի որոնման աշխատանքները ֆինանսավորելու փոխըմբռման համաձայնագիր ստորագրեցին<sup>40</sup>:

Գաղտնիք չէ, որ Հայաստանում կան գազի եւ նավթի որոշակի պաշարներ, եւ ԱՄՆ-ի երկրաբանական ծառայությունը պետք է օգնի դրանց գնահատման եւ արդյունաբերական շահագործման տնտեսական նպատակահարմարությունը որոշելու: Ամերիկյան կողմը պատրաստակամություն է հայտնել Ներդրումներ կատարելու հայտնաբերված հնարավոր պաշարների արդյունահանման համար:

Այս համաձայնագրից շատ չանցած՝ 2011թ. օգոստոսի 3-ին, վարչապետ Տիգրան Սարգսյանի ներկայությամբ Հայաստանի Էներգետիկայի նախարարության եւ օֆշորային International Minerals and Mines (IMM) ընկերության միջեւ կնքվեց հուշագիր, որ վերջինս պետք է ծեռամուխ լինի Հայաստանում թերթաքարային գազի պաշարների հետախուզման եւ գնահատման աշխատանքներ իրականացնելուն<sup>41</sup>: Այս աշխատանքները Հայաստանում պետք է կատարի պայմանագրի հիման վրա հիմնադրված IMM Energy Armenia ընկերությունը, որը ստացել է Նմանատիպ աշխատանքների իրականացման բա-

<sup>39</sup> See Kent Moors. The Polish Energy Revolution Begins. «Money Morning», September 29, 2011 (<http://moneymorning.com/2011/09/29/the-polish-energy-revolution-begins/>):

<sup>40</sup> See «U.S. To Explore Armenia's Shale Gas Reserves» (<http://www.azatutyun.am/content/article/24213717.html>):

<sup>41</sup> See «Western Investor To Look For Shale Gas In Armenia», August 04, 2011 ([http://www.rferl.org/content/armenia\\_shale\\_gas/24287238.html](http://www.rferl.org/content/armenia_shale_gas/24287238.html)):

ցառիկ իրավունք: Աշխատանքները ֆինանսվորելու Է ՀՀ կառավարությունը ԱՄՆ-ի տված հատուկ դրամաշնորհի միջոցով:

Առաջմ վաղ է խոսել Հայաստանում թերթաքարային գաղի պաշարների հնարավոր հայտնաբերման մասին, սակայն դա կարող է եականորեն ազդել Հայաստանի Հանրապետության Եներգետիկ անվտանգության համակարգի վրա՝ նվազեցնելով պետության կախվածությունն Եներգակիրների ներմուծումից, եւ, բացի տնտեսական ազդեցությունից, լրջորեն կփոխի Եներգետիկ քաղաքական հավասարակշռությունը ամբողջ տարածաշրջանում:

## 5. Հարավային Կովկասի Եներգետիկ միջանցքի նշանակությունը Եվրամիության համար եւ Հայաստանը (ամփոփում)

Հարավկովկասյան Եներգետիկ միջանցքը շարունակում է պահպանել աշխարհաքաղաքական իր կարեւորությունը Արեւմուտքի համար, սակայն դեռ չի կատարում աշխարհառազմավարական այն դերը, որը հաշվարկված է՝ Կենտրոնական Ասիայից Եներգակիրների արտահանում դեպի Արեւմուտք: Մինչ օրս շարունակում է հիմնականում աղբբեջանական Եներգակիրների արտահանման միջանցք լինել, ինչը տեղայնացնում է նվազեցնում է այդ միջանցքի աշխարհառազմավարական տրամաչափը: Սակայն նույնիսկ այդ պայմաններում միջանցքը կարեւոր է Արեւմուտքի համար, քանի որ Կենտրոնական Ասիայի Եներգետիկ շուկա մտնելու պայքարը մոտակա տասնամյակում կմնա ԱՄՆ-ի եւ Եվրամիության արտաքին քաղաքականության օրակագում:

Հայաստանի Հանրապետությունը եւ Լեռնային Ղարաբաղը, մոտ լինելով Եներգետիկ միջանցքին, ոչ միայն կրում են այդ միջանցքի ազդեցությունը, այլև ունեն այդ միջանցքի անվտանգության վրա ազդելու գործուն եւ դեռ չօգտագործած հնարավորությունը, որն էլ Հայաստանի Հանրապետության համար կարող է դառնալ տարածաշրջանում զսպման եւ կայունության հաստատման քաղաքականության կարեւորագույն բաղադրիչ: Այս տերությունները, որոնց համար հարավկովկասյան Եներգետիկ միջանցքը աշխարհառազմավարական կարեւորություն ունի, չեն կարող երաշխավորել դրա կայուն գործունեությունը՝ անտեսելով Հայաստանի անվտանգային ռազմավարական շահերը:

Հարավային Կովկասի Եներգետիկ աշխարհաքաղաքականության մեջ Հայաստանի Հանրապետության դերակատարությունը ավելացնելու նպատակով հարկավոր է՝

- «տեղ զբաղեցնել» Արեւմուտքի Եներգետիկ անվտանգության նոր մշակվող ռազմավարության մեջ՝ որպես այդ միջանցքի կայունության երաշխավոր պետություն,
- մշակել հնարավոր ռազմական բախման դեպքում Եներգետիկ միջանցքի վրա արագ ազդելու արդյունավետ միջոցներ:

Հարավային Կովկասում Եներգետիկ աշխարհաքաղաքականության մաս է կազմում նաեւ իրավիճակի զարգացումը Կասպից ծովի ավագանում, պայմանավորված՝

- ծովում սպառագինության մրցավագքի ուժեղացմամբ,
- ծովի կարգավիճակի բանակցային գործընթացի զարգացումներով:

Տարածաշրջանում խաղաղության պահպանումը կարելի է բացատրել ռազմաքաղաքական զսպման քաղաքականության արդյունավետությամբ, որը, սակայն, չի կարող կայուն լինել եւ փոփոխվում է՝ կախված նաեւ Եներգետիկ աշխարհաքաղաքական զարգացումներից, հետեւաբար՝ պետք է մշակել զսպման քաղաքականության արդյունավետ մեխանիզմներ՝ Հարավային Կովկասում Եներգետիկ միջանցքի աշխարհառազմավարական նշանակության փոփոխմանը համահունչ:

Եվրամիության Եներգետիկ ռազմավարության բաղկացուցիչ «Հարավային Եներգետիկ միջանցք» նախագիծը նախատեսում է նաեւ Կասպից ծովի հատակով նոր գազամուղի կառուցում, ինչը ռազմաքաղաքական նոր լարվածության պատճառ է Կասպից ծովի ավագանում:

Նախագիծը նախատեսում է Կասպից ծովի ավագանից եւ Մերձավոր Արեւելքից գաղի արտահանում դեպի Եվրոպա: Նոր ռազմավարության համատեքստում Եվրահանձնաժողովը բանակցություն-

Ներ է վարում Ադրբեյջանի եւ Թուրքմենստանի հետ՝ այդ նախագծին միանալու, ինչպես նաեւ Կասպից ծովով գազամուղի կառուցման վերաբերյալ:

Ինչպես արդեն նշել ենք, այս պայմաններում տարածաշրջանում հասունանում է ռազմաքաղաքական լարվածություն Կասպից ծովի հատակով գազամուղի կառուցման խնդրի պատճառով։ Ստեղծված իրավիճակում նոր գազամուղերի կառուցման քաղաքականությունը, մասնավորապես՝ «Հարավային միջանցք» նախագիծը, Կովկաս-կասպյան տարածաշրջանում կարող է տարածատման նոր սահմաններ ստեղծել՝ Եվրոպական ԱՄ, Ադրբեյջան եւ Թուրքմենստան՝ մի կողմից, Իրան, Ռուսաստան, նաեւ Չինաստան՝ մյուս կողմից։

Եվրոպական Եներգետիկ նոր ռազմավարության կարեւորագույն նախագծերից մեկի՝ «Հարավային միջանցքի»<sup>42</sup> շրջանակներում NABUCCO կամ մեկ այլ գազամուղի կառուցման ծրագիրը կարող է ազդել Հարավային Կովկասում ուժերի բաշխվածության վրա եւ սպառնալ տարածաշրջանի անվտանգությանը, եթե Եվրոպական միությունը ժամանակին քայլեր չենոնարկի՝ կանխելու իրավիճակի հնարավոր սրումը։

«Հարավային միջանցքի» նպատակն է՝ Եներգետիկ լրացուցիչ հոսքեր ապահովել Հարավային Կովկասից եւ Մերձավոր Արեւելքից դեպի Եվրոպա։ Այս նախագծի հիմքում Ռուսաստանից Եներգետիկ կախվածության թուլացման գաղափարն է, ինչի շուրջը համար մրցակցություն է ընթանում հատկապես Կովկաս-կասպյան տարածաշրջանում, որը այս մրցակցության կիզակետում է, եւ որտեղ տեղի է ունենում ուժերի նոր դասավորություն՝ իրավիճակի փոփոխման հետեւանքով։

Հարավային Կովկասում սրվող Եներգետիկ մրցակցությունը ազդում է նաեւ տարածաշրջանի սառեցված հակամարտությունների, հատկապես դարաբաղյան հիմնախնդրի վրա։ Ինչպես հայտնի է, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններից ոչ շատ հեռու անցնում են Ադրբեյջանից դեպի Վրաստան եւ Թուրքիա ձգվող բոլոր խողովակաշարերը։ Իսկ Հարավային Կովկասը շատ զգայուն տարածաշրջան է՝ մի շարք չնուծված հակամարտություններով եւ նոր հակամարտությունների ծագման մեջ հնարավորություններով։

Տերությունների Եներգետիկ մրցակցությունը հավելյալ լարվածություն է առաջացնում տարածաշրջանում, որտեղ շատ փիրուն խաղաղություն է պահպանվում։ Եներգետիկ նոր զարգացումներից որոշակիորեն փոխվում է նաեւ ռազմաքաղաքական հավասարակշռությունը տարածաշրջանում։ Գաղտնիք չէ, որ նավթով ու գազով հարուստ Ադրբեյջանը, ի հաշիվ քնական այդ հարստության շահագործման, ոչ միայն ուժեղացնում է երկրի կառավարման ավտորիտար համակարգը, այլև իրահրում սպառազինության նոր մրցավագը, որի մեջ ներքաշվում է Յայաստանը։ Ադրբեյջանը չի թաքցնում եւ երբեք էլ չի թաքցրել, որ տարածաշրջանով անցնող Եներգետիկ հոսքերը եւ դրանցում Արեւմուտքի հետաքրորդությունը օգտագործում է ընդեմ Յայաստանի։ Վերջին 7-8 տարիներին նավթի արտահանման ծավալների մեծացումից եւ վառելիքի գների անսահմանեա աճից Ադրբեյջանը շատ արագ հարստացավ, ինչը լրջորեն խախտում է առկա ռազմաքաղաքական հավասարակշռությունը ոչ միայն Յայաստանի հետ հարաբերություններում, այլև ընդհանրապես տարածաշրջանում<sup>43</sup>։

Վրաց-ռուսական հակամարտությունն արդեն ցույց տվեց, թե ինչ փիրուն է հավասարակշռությունը տարածաշրջանում, եւ ինչպես կարող են որոշ անպատճախանառու քաղաքական գործիքների քայլեր հանգեցնել լոկալ պատերազմի, զոհերի, ինչպես նաեւ Եներգետիկ հոսքերի ընդհատման։ Սառեցված հակամարտությունների պայմաններում իրավիճակի լարումը սպառնալիք է հարեւան պետությունների եւ Եվրոպայի Եներգետիկ ծրագրերի համար, քանի որ նրանք Հարավային Կովկասը եւ Կասպյան տարածաշրջանը դիտարկում են որպես Եներգիայի մատակարարման Ռուսաստանի այլընտրանը։

Հարավային Կովկասի նոր գազամուղի կառուցման գաղափարն առաջ մղող լրբիստները պետք է ընկալեն, որ հարավկովկասյան Եներգետիկ միջանցքի կայունությունը ուղղակիորեն կախված է տարածաշրջանի անվտանգությունից եւ առկա հակամարտություններին հավասարակշռված մոտեցու-

<sup>42</sup> Stu «Energy 2020. A strategy for competitive, sustainable and secure energy» ([http://ec.europa.eu/energy/publications/doc/2011\\_energy2020\\_en.pdf](http://ec.europa.eu/energy/publications/doc/2011_energy2020_en.pdf)):

<sup>43</sup> Stu «Azerbaijan Preparing for War Against Armenia». «The Total Collapse», February 13, 2011 (<http://www.thetotalcollapse.com/azerbaijan-preparing-for-war-against-armenia/>):

մից: Իսկ Յարավային Կովկասի փխրուն խաղաղության պահպանմանը սպառնում են պաշտոնական Բաքվի ռազմատեսչ հրետորաբանությունը եւ սպառագինության մրցավագքը, ինչը պայմանավորված է Եներգետիկ հոսքերից ստացվող հսկայական եկամուտներով: Յետեւաբար՝ հարավկովկասյան Եներգետիկ միջանցքի կայունությունը խաթարվում է առաջին հերթին Աղրբեշանի հշխանությունների ռազմատեսչությամբ, որը ժողովրդավարական պետություն կառուցելու իր անկարողությունը եւ Ալիեւների ավտորիտար համակարգի գոյությունը փորձում է արդարացնել առկա հակամարտությամբ<sup>44</sup>:

Նավթի ու գազի առկայությունը շատ հազվադեպ է հնարավորություն տվել այդ պետություններում ժողովրդավարություն կառուցելու, փոխարենը միշտ էլ նպաստել է բռնատիրական համակարգերի հաստատմանը: Յետեւաբար՝ բնական պաշարների վրա հիմնված ավտորիտար պետությունների հետ Եներգետիկ գործարքներ իրականացնող երկրները ակամա դառնում են այդ ավտորիտարիզմի հովանավորը:

Այսինքն՝ ինչքան խորանում է Աղրբեշան-Արեւմուտք Նավթային համագործակցությունը, այնքան փխրուն է դառնում տարածաշրջանի կայունությունը եւ այնքան հզորանում Ալիեւների բռնատիրությունը: Եվրամիությունը իր Եներգետիկ նոր ռազմավարությամբ, փաստորեն, ակամա դարձել է տարածաշրջանում սրվող նոր լարվածության «հովանավորը», և աեւ Աղրբեշանի՝ նոր սպառագինության մրցավագքի կազմակերպման հիմնական ֆինանսավորողը, բռնատիրական համակարգի երաշխավորը: Սա հատկապես տարօրինակ է, եթիւ Եվրամիությունը, հանձին Ֆրանսիայի, մաս է կազմում ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրների, այսինքն՝ ուղղակիորեն ներգրավված է դարաբաղյան հարցի միջնորդական առաքելությանը:

Ինչքան ուժեղանում է Աղրբեշանի դերը Եվրամիության Եներգետիկ անվտանգության համակարգում, այնքան վտանգվում է կայունությունը տարածաշրջանում, հետեւաբար՝ Եներգետիկ միջանցքի գործունեությունը նույնապես դառնում է անհուսալի: Այսինքն՝ հենց Աղրբեշանը է տարածաշրջանում անկայունություն սերմանողը, եւ Եվրամիությունը չի կարող երաշխավորել հարավկովկասյան Եներգետիկ միջանցքի գործունեությունը՝ հիմնվելով միայն Աղրբեշանի եւ նրա քաղաքական ու տնտեսական շահերի վրա:

Յայաստանը, որը բարդ աշխարհաքաղաքական իրավիճակում է, առավել նախանձախնդրորեն է վերաբերվում տարածաշրջանի կայունության ու սեփական անվտանգությանը, եւ ունենալով չլուծված հակամարտություն, փակ սահմաններ, բավականին բարդ հարեւաններ՝ հանձինս իրանի եւ Վրաստանի, զգուշորեն է վերաբերվում Եվրամիության նախաճեռնությանը՝ հերթական գազամուղը կառուցել եւ Աղրբեշանի ներառել իր Եներգետիկ անվտանգության համակարգում:

Այս պայմաններում Եվրամիությունը պետք է շահագրգռված լինի Յարավային Կովկասում կայունության, և աեւ անվտանգության բարձր մակարդակի պահպանման համար, քանի որ Աղրբեշանի ռազմական հրետորաբանությունը հուշում է, որ այդ պետությունն է սպառնում տարածաշրջանային անվտանգությանը, այսինքն՝ տարածաշրջանից Եներգակիրների արտահանմանը դեպի Եվրոպա: Եվ հակառակը՝ Յայաստանը, իր կայուն քաղաքական համակարգով, հավասարակշիռ մոտեցումով ու խաղաղությանը հասնելու ճգնումով, այն պետությունն է, որը կարողանում է զսպել Աղրբեշանի ռազմատեսչությունն ու պահպանել կայունությունը եւ խաղաղությունը տարածաշրջանում: Այս քաղաքականության հիմքում սեփական անվտանգությունը պահպանելու մղումն է, որը նպաստում է նաեւ տարածաշրջանի կայունությանը, հետեւաբար՝ Եներգակիրների անխափան հոսքին դեպի Եվրոպա:

ՀՀ-ն եւ Եվրամիությունը պետք է համատեղ մշակեն նոր մոտեցում տարածաշրջանում անվտանգության հաստատման եւ դրանում Յայաստանի դերի գնահատման հարցում՝ հասկանալով, որ շարունակական ներդրումներն Աղրբեշանի տնտեսության Եներգետիկայի հատվածում անհավասարակշռություն են առաջացնում տարածաշրջանում, սպառնում կայունությանը: Եվ դա պետք է կարգավորվի Յայաստանի տնտեսության մի շարք ճյուղերում համարժեք ներդրումներով եւ տնտեսական ու հումանիտար լայնածավալ օգնությամբ, ինչը հնարավորություն կտա պահպանելու առկա փխրուն կայունությունը տարածաշրջանում: Եվրամիությունը պետք վերագնահատի Յայաստանի դերը տարածաշրջա-

<sup>44</sup> Stu «Expert: OSCE Minsk Group urging Azerbaijan to withhold armed rhetoric», 25.10.2011 (<http://www.panorama.am/en/politics/2011/10/25/expert/>):

Նում՝ որպես կայունության պահպանման կարեւորագույն գործոնի, որը կարեւոր առաքելություն է ստանձնել՝ պահպանելու անվտանգությունը Եւ խաղաղությունը, ինչը ձեռնտու է ոչ միայն Հայաստանին, այլև Եներգետիկ միջանցքի կայուն գործունեությամբ շահագրգիռ Երկրներին:

Հայաստանի Հանրապետության մուտքը Եվրասիական տնտեսական միություն Եականորեն փոխում ռազմաքաղաքական-անվտանգային միջավայրը տարածաշրջանում։ Փոփոխվող իրավիճակը ազդում է նաեւ տարածաշրջանի Եներգետիկ դիմակայունությանը Եւ նպաստում մեր պետության Եներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացմանն ու հզորացմանը։ Այսուհետ տարածաշրջանում Եներգետիկ աշխարհաքաղաքական զարգացումները նոր որակ ու երանգ են ստանում, ինչը արդեն առանձին վերլուծության թեմա է։